

ՈՐՈՇՈՒՄ

11 փետրվարի 2014 թ.

N 50-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
22-Ի N 134-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հավանություն տալ Լեռնային Ղարաբաղի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառավարման մարմինների ղեկավարներին՝

1) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 3-րդ աշխատանքային օրը համակատարողը միջոցառման համար պատասխանատու մարմին է ներկայացնում տեղեկատվություն Լեռնային Ղարաբաղի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրում ընդգրկված միջոցառումների կատարման ընթացքի մասին.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 8-րդ աշխատանքային օրը պատասխանատու մարմինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում տեղեկատվություն Լեռնային Ղարաբաղի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրում ընդգրկված միջոցառումների կատարման ընթացքի մասին՝ բացառությամբ այն միջոցառումների, որոնց պատասխանատու մարմինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն է:

Տեղեկատվության մեջ պետք է մանրամասն արտացոլվեն իրականացված կամ իրականացվող միջոցառումները և դրանց ազդեցությունը, մասնավորապես, միջոցառման կատարման արդյունքում ընթացակարգերի, դրանց ժամկետների և (կամ) ծախսի կրճատման վրա:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին՝ ամփոփել ներկայացված տեղեկատվությունը և մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-րդ աշխատանքային օրը կատարված աշխատանքների ընթացքի մասին հաշվետվություն ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

4. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 22-ի «Լեռնային Ղարաբաղի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 27-ի N 788 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 134-Ն որոշումը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/Հ | Առաջարկվող միջոցառումը | Նպատակը | Իրականացնող մարմինները | | Կատարման ժամկետը |
|---------------------------|--|--|--------------------------------------|---|------------------|
| | | | պատասխանատու մարմինը | համակատարողը | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. Հարկերի վճարում | | | | | |
| 1.1 | Հարկային մարմիններ էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման համակարգի ներդրում | Հաշվետվությունների ներկայացման գործող էլեկտրոնային համակարգ | ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 01.03.2014թ. |
| 1.2 | Էլեկտրոնային հարկային հաշվետվության համակարգի համատարած կիրառման համար պայմանների ապահովում, այդ թվում՝ բոլոր հարկային հաշվետվական տեսակների էլեկտրոնայնացում | Հարկային հաշվետվությունները ներկայացնելու համակարգի արդյունավետության բարձրացում | ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 01.01.2016թ. |
| 1.3 | Եռամսյակային պարբերականությամբ հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակներով ԼՂՀ ԿԱ ՀՊԾ կայքում էլեկտրոնային եղանակով հաշվետվություն ներկայացնողների թվի, ընդհանուրի մեջ նրանց տեսակարար կշռի և նրանց կողմից վճարված տարեկան հարկային մուտքերի տեսակարար կշռի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում | Հարկային բնագավառում իրականացված բարեփոխումների մոնիթորինգ և լուսաբանում | ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | | շարունակական |

| | | | | | |
|------|---|---|--------------------------------------|---|------------------------|
| 1.4 | Հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացումն ապահովելու նպատակով գործատուներին աջակցման մեխանիզմների ներդրում | Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում, պարտավորությունների կատարման վրա ծախսվող ժամանակի կրճատում | ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | | 2014 թվականի ընթացքում |
| 1.5 | Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման և գրանցման գրքերի էլեկտրոնային վարման հնարավորության ստեղծում | Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման և գրանցման գրքերի վարման ժամկետների և ծախսերի կրճատում | ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | | 01.07.2015 թ. |
| 1.6 | «Դրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխությունների կատարում, որի համաձայն հարկ վճարողների համար կապահովվի դրամարկղային գրքերն էլեկտրոնային եղանակով վարելու հնարավորություն | Դրամարկղային գրքերի վարման ժամկետների կրճատում | ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 01.01.2016 թ. |
| 1.7 | Հարկ վճարողների համար դրամարկղային գրքերն էլեկտրոնային եղանակով վարելու հնարավորության ապահովում | Դրամարկղային գրքերի վարման ժամկետների կրճատում | ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | | 01.01.2016 թ. |
| 1.8 | ԼՂՀ ԿԱ ՀՊԾ-ի պաշտոնական ինտերնետային կայքի օրենսդրություն բաժնում իրավական ակտերի դասակարգում ըստ յուրաքանչյուր հարկատեսակի: Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի, այդ թվում նաև գերատեսչական ակտերի համախմբում | Տնտեսավարողների համար իրազեկվածության և հասանելիության ապահովում | ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | | 01.07.2014թ. |
| 1.9 | Հարկ վճարողների համար հարկային օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ իրազեկման և ուսումնական միջոցառումների ծրագրի մշակում ու դրա իրականացում | Հարկային հարցերում հարկ վճարողների իրազեկվածության մակարդակի բարձրացում | ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | | շարունակական |
| 1.10 | ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պաշտոնական կայքում ԼՂՀ հարկ վճարողների որոնման համակարգի ստեղծում | Հարկ վճարողների վերաբերյալ հենքային տեղեկատվության ստացման հարմար գործիքների ներդրում | ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | | 01.07.2014թ. |

| | | | | | |
|------|--|---|------------------------------|--|---|
| 1.11 | Կազմակերպությունների մասով հողի հարկի և գույքահարկի հաշվարկները ներկայացնելու պահանջի վերացման նպատակահարմարության քննարկում և, ըստ անհրաժեշտության, համապատասխան օրենսդրական նախագծերի մշակում | Գույքահարկի և հողի հարկի հաշվետվությունները ներկայացնելու պահանջը վերացնելու միջոցով ժամանակի և ծախսերի կրճատում | ԼՂՀ կառավարության աշխատակազմ | | 01.04.2015 թ. |
| 1.12 | <p>Գույքահարկի և հողի հարկի հետ կապված հարաբերություններում տեղական ինքնակառավարման մարմինների և տնտեսավարող սուբյեկտների միջև փոխադարձ ծանուցման էլեկտրոնային համակարգի ներդրում, մասնավորապես՝</p> <p>1) գույքահարկի և հողի հարկի հաշվարկման համար հարկվող օբյեկտների և դրանց սեփականատերերի վերաբերյալ ստացված տեղեկությունների հիման վրա տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշվարկված գույքահարկի և հողի հարկի գումարների, առկա պարտավորությունների (այդ թվում՝ հաշվարկված տույժերի) վերաբերյալ հարկ վճարող կազմակերպություններին տեղեկացնելու (ծանուցելու) մեխանիզմի ներդրում՝ անձին պաշտոնական էլեկտրոնային փոստին ծանուցելու միջոցով.</p> <p>2) ՏԻՄ-երից ստացված գույքահարկի և հողի հարկի վերաբերյալ ծանուցումներում օրենքով սահմանված արտոնություններն արտացոլված չլինելու դեպքում տնտեսավարող սուբյեկտների կողմից ՏԻՄ-երին էլեկտրոնային եղանակով իրազեկելու հնարավորության ստեղծում</p> | Տնտեսավարողների կողմից գույքահարկի և հողի հարկի հետ կապված վճարումների վերաբերյալ իրազեկվածության ապահովում, ծախսերի ճշգրիտ արտացոլում հարկային հաշվետվություններում (մասնավորապես, շահութահարկի մասով) | ԼՂՀ կառավարության աշխատակազմ | | սույն բաժնի 1.11-րդ կետով նախատեսվող «Գույքահարկի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հողի հարկի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքներն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում |

2. Ընկերության հիմնադրում, փակում/լուծարում

| | | | | | |
|-----|---|--|------------------------------------|--------------------------------------|--|
| 2.1 | «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ԼՂՀ նոր օրենքի նախագծի մշակում | 2.1.1. E-registry համակարգի կիրարկման համար անհրաժեշտ իրավական հիմքերի ապահովում: Իրավաբանական անձանց պետական գրանցման «մեկ պատուհան» սկզբունքով ծառայությունների մատուցում | ԼՂՀ արդարադատության նախարարություն | | 01.07.2014 թ. |
| | | 2.1.2. Առևտրային տիպի ընկերությունների էլեկտրոնային գրանցման հնարավորության ապահովում | | | 01.07.2014թ. |
| | | 2.1.3. Իրավաբանական անձանց լուծարման և անհատ ձեռնարկատերերի հաշվառումից հանելու ընթացակարգերի պարզեցում, ժամկետների կրճատում | | | 01.07.2014 թ. |
| 2.2 | Գրանցման ժամանակ իրավաբանական և ֆիզիկական անձանց պետական ռեգիստրի կողմից ՀՎՀՀ-ի տրամադրում | Ընկերության հիմնադրման ընթացակարգերի պարզեցում, ժամանակի և ծախսերի կրճատում | ԼՂՀ արդարադատության նախարարություն | ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | 01.07.2014թ. |
| 2.3 | Ընկերությունների գրանցմանն առնչվող վիճակագրության՝ եռամսյակային պարբերականությամբ հրապարակում | Ընկերությունների գրանցման բնագավառում իրականացված բարեփոխումների մոնիթորինգ և լուսաբանում | ԼՂՀ արդարադատության նախարարություն | | շարունակական առաջին հրապարակումը՝ 01.04.2014 թ.-ից |

3. Շինարարական թույլտվություններ

| | | | | | |
|-----|--|--|------------------------------------|--|--------------|
| 3.1 | Շինարարության թույլտվությունների տրամադրման բնագավառի իրավական ակտերում փոփոխությունների իրականացում, որի արդյունքում կկրճատվեն շինարարության թույլտվության ստացման համար պահանջվող քայլերը և ժամկետները, այդ թվում նաև կկրճատվի հասարակության իրազեկման համար պահանջվող ժամկետը | Շինարարական թույլտվությունների ստացման ժամկետների կրճատում | ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն | Ստեփանակերտի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 01.10.2015թ. |
|-----|--|--|------------------------------------|--|--------------|

| | | | | | |
|-----|--|---|--|---|---------------|
| 3.2 | <p>Օրենսդրորեն հստակեցնել, որ ճարտարապետահատակագծային առաջադրանք ձևավորելու փուլում տեխնիկական պայմաններ ստանալու նպատակով մատակարարներին դիմում է ճարտարապետա-նախագծային առաջադրանք տվող մարմինը: Միաժամանակ սահմանել, որ այդ տեխնիկական պայմանները հանդիսանում են ճարտարապետա-նախագծային առաջադրանքի անբաժանելի մաս</p> | <p>Համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կամ լրացումների կատարում կամ նոր իրավական ակտերի ընդունում</p> | <p>ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով (համաձայնությամբ)</p> | <p>ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն, Ստեփանակերտի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> | 01.11.2015թ. |
| 3.3 | <p>Ճարտարապետահատակագծային առաջադրանք ձևավորելու փուլում տեխնիկական պայմաններ ստանալու նպատակով մատակարարներին կառուցապատողի դիմելու պրակտիկայի վերացում և դրա վերաբերյալ հասարակության իրազեկման ապահովում</p> | <p>Համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կամ լրացումների կատարում կամ նոր իրավական ակտերի ընդունում</p> | <p>Ստեփանակերտի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> | <p>ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն</p> | 01.01.2016 թ. |
| 3.4 | <p>Կառուցապատողի գործունեությունը պարզեցնելու նպատակով հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով ուղեցույցի (քարտեզի) մշակում, որում հերթականությամբ կերևան շինարարական թույլտվությունների ստացման համար անհրաժեշտ բոլոր քայլերը, դրանց իրավական հիմքերը, յուրաքանչյուր քայլի տևողությունը և արժեքները: Ուղեցույցի (քարտեզի) տպագրում և տարածում, ինչպես նաև հրապարակում լրատվամիջոցների միջոցով</p> | <p>Հասարակության իրազեկվածության բարձրացում և ապահովում</p> | <p>ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն</p> | <p>Ստեփանակերտի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> | 01.05.2014 թ. |
| 3.5 | <p>Շինարարական թույլտվությունների էլեկտրոնային համակարգի ներդրման հայեցակարգի մշակում</p> | <p>Շինարարական թույլտվությունների ստացման համար անհրաժեշտ ընթացակարգերի և ժամանակի կրճատում</p> | <p>ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն</p> | <p>Ստեփանակերտի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> | 01.11.2015 թ. |

| | | | | | |
|-----|--|--|------------------------------------|--|---------------|
| 3.6 | <p>Օրինակելի նախագծերի հիման վրա նախատեսվող շինարարության ընթացակարգերի և ծախսերի կրճատում, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> - օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտների համար պարզեցված ընթացակարգով թույլտվությունների տրամադրում, - էլեկտրոնային եղանակով օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտների նախագծային փաստաթղթերի ձեռքբերման հնարավորության ապահովում, - շինարարական աշխատանքների որակի ինքնահավաստման սկզբունքի ներդրում | <p>Օրինակելի նախագծերի հիման վրա նախատեսվող շինարարության համար պարզ ընթացակարգի սահմանում, նախագծային փաստաթղթերի մատչելիության ապահովում, ծախսերի կրճատում</p> | ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն | Ստեփանակերտի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 01.10.2015 թ. |
| 3.7 | <p>Հաճախ օգտագործվող ՓՄՁ ենթակառուցվածքի համար օրինակելի նախագծերի մշակում (պահեստներ, սննդի, մանրածախ առևտրի օբյեկտներ և այլն), հրատարակում և տեղադրում ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կայքում</p> | <p>Անհատ և կորպորատիվ ձեռնարկատերերին հաստատված նախագծերի տրամադրում՝ դրանց հիման վրա պարզեցված ընթացակարգով շինարարություն իրականացնելու համար: Նախագծային փաթեթում ներառել ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից հրապարակվող տեղեկատվական տեղեկագրում ներառված շինարարական նյութերի միջինացված գներով հաշվարկված մի շարք բնորոշ օբյեկտների շինարարության արժեքը</p> | ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն | | 01.11.2014 թ. |

| | | | | | |
|------|--|--|--|--|---------------|
| 3.8 | <p>Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում համապատասխան փոփոխությունների կատարում, որոնց համաձայն նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման աշխատանքների կատարման փուլը, այդ թվում նաև՝ կատարվող ծախսերի մասով, հստակ կտարանջատվի ծառայությունների մատուցման ընթացակարգային փուլից</p> | <p>Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ծախսերի և ժամկետների կրճատում</p> | <p>ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով (համաձայնությամբ)</p> | | 01.05.2016 թ. |
| 3.9 | <p>«ԼՂՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 26-ի N 219 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագծի մշակում և այն ԼՂՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը</p> | <p>Ճարտարապետահատակագծային առաջադրանքի ձևավորման փուլում հեռահաղորդակցության մասով ելակետային տվյալների տրամադրման խնդրի լուծում</p> | <p>ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն</p> | <p>Ստեփանակերտի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> | 01.11.2014 թ. |
| 3.10 | <p>Ստեփանակերտ քաղաքում տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի, շինարարական թույլտվությունների և ավարտված շինարարության շահագործման ակտերի վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ վիճակագրության (համաձայն հաստատված ձևաչափի) տեղադրում Ստեփանակերտի քաղաքապետարանի պաշտոնական կայքում</p> | <p>Շինարարական թույլտվությունների ստացման բնագավառում իրականացված բարեփոխումների մոնիթորինգ և լուսաբանում</p> | <p>Ստեփանակերտի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> | | շարունակական |
| 3.11 | <p>Շինարարական թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում</p> | <p>Էլեկտրոնային եղանակով շինարարական թույլտվությունների տրամադրման գործընթացի ապահովում</p> | <p>ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն</p> <p>Ստեփանակերտի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> | <p>ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով (համաձայնությամբ)</p> <p>ԼՂՀ կառավարության աշխատակազմ</p> | 01.10.2016 թ. |

4. Էլեկտրականության միացում

| | | | | | |
|-----|--|--|---|--|---------------|
| 4.1 | Էլեկտրական ցանցին նոր սպառողների միացման և մատակարարման պայմանագրերի կնքման էլեկտրոնային համակարգի ներդրման ժամկետների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը | Էլեկտրական ցանցին նոր սպառողների միացման համար անհրաժեշտ գործընթացներում էլեկտրոնային համակարգի ներդրում | ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով (համաձայնությամբ) | | 01.01.2016 թ. |
| 4.2 | ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի N 16-Ն որոշման մեջ փոփոխությունների կատարում, որի համաձայն կկրճատվեն էլեկտրական ցանցին նոր սպառողների միացման ժամկետները, այդ թվում՝ 0.4 կՎ լարմամբ էլեկտրական ցանցին միացման համար կկրճատվեն ժամկետները և գործընթացների քանակը | Էլեկտրական ցանցին նոր սպառողների միացման ժամկետների և գործընթացների կրճատում | ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով (համաձայնությամբ) | | 01.05.2016 թ. |

5. Սեփականության գրանցում

| | | | | | |
|-----|---|--|--|---|--------------|
| 5.1 | Մշակել անշարժ գույքի կադաստրում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի էլեկտրոնային եղանակով իրականացման գործողությունների ծրագիրը | Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի պարզեցում, ժամանակի և ծախսերի կրճատում | ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 01.12.2015թ. |
| 5.2 | ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից առցանց ռեժիմով գույքի գրավադրման մասին տեղեկանքի ստացման ապահովում | Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ ժամկետների կրճատում | ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | | 01.12.2016թ. |

| | | | | | |
|-----|--|--|---|--|---------------------|
| 5.3 | <p>Գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման, ինչպես նաև գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվություն ստանալու համար դիմումների՝ ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքէջում առցանց ներկայացման հնարավորության ստեղծում</p> | <p>Անշարժ գույքին վերաբերող գործարքների կնքման ժամկետների կրճատում</p> | <p>ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</p> | | <p>01.12.2016թ.</p> |
|-----|--|--|---|--|---------------------|

6. Իրազեկվածության ապահովում

| | | | | | |
|-----|---|---|-------------------------------------|---|----------------------|
| 6.1 | <p>ԼՂՀ պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվական քարտեզների մշակման աշխատանքների համակարգում, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> - ԼՂՀ պետական կառավարման մարմինների կողմից տնտեսվարողի Գործունեությունը պարզեցնելու նպատակով հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով տեղեկատվական քարտեզների մշակում, որոնցում հստակ նկարագրված կլինեն համապատասխան մարմնի կարգավորման ոլորտին առնչվող գործառնությունները և դրանց ընթացակարգերը, նշված կլինեն դրանց իրավական հիմքերը, տևողությունները և արժեքները - Քարտեզների տեղադրում <p>Համապատասխան պետական կառավարման մարմնի, ինչպես նաև յուրաքանչյուր ընթացակարգի իրականացման համար պատասխանատու այլ մարմինների կայքերում</p> | <p>Հասարակության իրազեկվածության բարձրացում և ապահովում</p> | <p>ԼՂՀ կառավարության աշխատակազմ</p> | <p>ԼՂՀ պետական կառավարման մարմիններ</p> | <p>01.09.2014 թ.</p> |
|-----|---|---|-------------------------------------|---|----------------------|

| | | | | | |
|-----|--|--|---|--|----------------------|
| 6.2 | <p>Օրինակելի նախագծերով իրականացվող շինարարության գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում, պաստառների տպագրում և շրջվարչակազմերում և քաղաքապետարաններում տեսանելի վայրում տեղադրում, նախագծերի կիրառման կարգի և դրանցով շինարարության իրականացման վերաբերյալ խորհրդատվական ձեռնարկի տեղադրում ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կայքում</p> | <p>Օրինակելի նախագծերի համար շինթույլտվության ժամկետների կրճատում և շինթույլտվությունների տրամադրման ճկուն համակարգի ստեղծում: Օրինակելի նախագծերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում</p> | <p>ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն</p> | <p>ԼՂՀ կառավարության աշխատակազմ Ստեփանակերտի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> | <p>01.10.2015 թ.</p> |
|-----|--|--|---|--|----------------------|

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ